

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է  
Բաժնետիրոջ 28.02.2006թ. որոշմամբ

ԳՐԱՆՑՎԱԾ Է  
ՀՀ կենտրոնական բանկում  
28 մարտի 2006թ.

Փոփոխված է  
Բաժնետիրոջ 20/02/2008թ.  
Բաժնետիրոջ 08/05/2008թ.  
Բաժնետիրոջ 02/10/2008թ.  
Բաժնետիրոջ 02/10/2008թ.  
Բաժնետիրոջ 02/10/2008թ.  
Բաժնետիրոջ 02/10/2008թ.  
Բաժնետիրոջ 02/10/2008թ.  
Բաժնետիրոջ 14/09/2009թ.  
Բաժնետիրոջ 16/12/2009թ.  
Բաժնետիրոջ 02/08/2010թ.  
Բաժնետիրոջ 14/03/2011թ.  
Բաժնետիրոջ 29/05/2013թ.  
Բաժնետիրոջ 10.10 2014թ.  
Բաժնետիրոջ 10/02/2016թ.  
Բաժնետիրոջ 18/12/2020թ.  
Բաժնետիրոջ 15/07/2023թ.

ԱՐԵԳԱԿ ՈՒՎԿ ՓԲԸ գրանցման համարը 11  
Փոփոխությունը գրանցված է  
31/03/2008թ. թիվ 1/287Ա որոշմամբ  
16/07/2008թ. թիվ 1/707Ա որոշմամբ  
12/12/2008թ. թիվ 1/1233Ա որոշմամբ  
30/12/2008թ. թիվ 1/1331Ա որոշմամբ  
06/03/2009թ. թիվ 1/248Ա որոշմամբ  
06/03/2009թ. թիվ 1/248Ա որոշմամբ  
14/04/2009թ. թիվ 1/448Ա որոշմամբ  
26/10/2009թ. թիվ 1/1342Ա որոշմամբ  
19/05/2010թ. թիվ 1/467Ա որոշմամբ  
15/09/2010թ. թիվ 1/1045Ա որոշմամբ  
04/05/2011թ. թիվ 1/447Ա որոշմամբ  
22/07/2013թ. թիվ 1/625Ա որոշմամբ

որոշմամբ

Բաժնետիրոջ լիազորված անձ  
(իրավասու անձի պաշտոնը)

Գոհար Գրիգորյան  
(անուն, ազգանուն, ստորագրություն)

Գործադիր տնօրեն  
Մարիամ Եսայան



ՀՀ կենտրոնական բանկի նախագահ

Մարտին Գալստյան  
(անուն, ազգանուն, ստորագրություն)

«ԱՐԵԳԱԿ» ՈՒՆԻՎԵՐՍԱԼ ՎԱՐԿԱՅԻՆ  
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ  
ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ  
Կ Ա Ն Ո Ն Ա Դ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն  
(ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ)

## 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

- 1.1. «ԱՐԵԳԱԿ» ՈՒՆԻՎԵՐՍԱԼ ՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ ՓԲԸ-ն (այսուհետ՝ վարկային կազմակերպություն) ստեղծվել է վարկային կազմակերպության հիմնադրի 2006թ.-ի փետրվարի 28-ի որոշմամբ:
- 1.2. Վարկային կազմակերպությունը հանդիսանում է «ՄԵՖ Ինթերնեյշնլ ունիվերսալ վարկային կազմակերպություն» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության իրավահաջորդը:
- 1.3. Վարկային կազմակերպության հիմնադիր փաստաթուղթը կանոնադրությունն է, որի պահանջները պարտադիր են վարկային կազմակերպության բաժնետերերի և կառավարման մարմինների համար:
- 1.4. Վարկային կազմակերպությունը համարվում է ստեղծված և ձեռք է բերում իրավաբանական անձի կարգավիճակ Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկում գրանցվելու պահից և իրավունք է ստանում իրականացնել օրենսդրությամբ սահմանված ֆինանսական գործառնություններ՝ ՀՀ կենտրոնական բանկի կողմից վարկային կազմակերպության գործունեություն իրականացնելու լիցենզիա ստանալու պահից:
- 1.5. Վարկային կազմակերպությունն ունի սեփականության իրավունքով իրեն պատկանող գույք, իր անվամբ կյոթ կնիք և անկյունային դրոշմակնիք:
- 1.6. Վարկային կազմակերպության իրավաբանական հասցեն է՝ ՀՀ, ք. Երևան 0010, Ամիրյան փողոց 4/6 շենք, թիվ 146, թիվ 147, թիվ 152, թիվ 153 և 155 տարածքներ:
- 1.7. Վարկային կազմակերպության լրիվ ֆիրմային անվանումն է՝  
հայերեն՝ «ԱՐԵԳԱԿ» ՈՒՆԻՎԵՐՍԱԼ ՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ  
փակ բաժնետիրական ընկերություն,  
անգլերեն՝ “AREGAK” Universal Credit Organization Closed Joint Stock Company
- 1.8. Վարկային կազմակերպության կրճատ անվանումն է՝  
հայերեն՝ «ԱՐԵԳԱԿ» ՈՒՎԿ ՓԲԸ,  
անգլերեն՝ “AREGAK” UCO CJSC

## 2. ՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՅՎՈՂ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՅԼ ԳՈՐԾԱՐՔՆԵՐ

- 2.1. Վարկային կազմակերպությունն օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով լիցենզիայի հիման վրա կարող է՝
  - ա) ներգրավել փոխառություններ և (կամ) կնքել նմանատիպ այլ գործարքներ,
  - բ) տրամադրել վարկեր, փոխառություններ, իրականացնել պարտքի կամ առևտրային գործարքների ֆինանսավորում, ֆակտորինգ,
  - գ) տրամադրել երաշխիքներ,
  - դ) թողարկել, գնել (գեղչել), վաճառել արժեթղթեր և կատարել նմանատիպ այլ գործառնություններ,
  - ե) մատուցել ֆինանսական գործակալի (ներկայացուցչի) ծառայություններ, կառավարել այլ անձանց ներդրումները, իրականացնել հավատարմագրային (լիազորագրային) կառավարում, պետական պարտատոմսերի շուկայում իրականացնել մասնագիտացված գործունեություն (դիլերային, բրոքերային, գործակալական, ենթապահառուական),
  - զ) անկանխիկ գնել և վաճառել արտարժույթ, այդ թվում՝ կնքել դրամի և արտարժույթի ֆյուչերսներ, օպցիոններ և նման այլ գործարքներ,

- է) կանխիկ գնել և վաճառել արտարժույթ, այդ թվում՝ կնքել դրամի և արտարժույթի ֆյուչերսներ, օպցիոններ և նման այլ գործարքներ:
- ը) իրականացնել ֆինանսական վարձակալություն (լիզինգ),
- թ) ի պահ ընդունել թանկարժեք մետաղներ, քարեր, ոսկերչական իրեր, արժեթղթեր, փաստաթղթեր և այլ արժեքներ,
- ժ) մատուցել ֆինանսական խորհրդատվություն,
- ժա) ստեղծել և սպասարկել հաճախորդների վարկարժանության տեղեկատվական համակարգ, իրականացնել պարտքերի հետ ստացման գործունեություն,
- ժբ) Կենտրոնական բանկի համաձայնությամբ իրականացնել վարկային կազմակերպությունների համար միջազգային պրակտիկայում ընդունված գործառնություններ:

- 22. Վարկային կազմակերպությունը նշված գործառնությունները կատարում է ինչպես ՀՀ դրամով, այնպես էլ արտարժույթով՝ բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:
- 23. Վարկային կազմակերպությունն իրավունք ունի իր անունից կնքել պայմանագրեր, ձեռք բերել գույքային և անձնական ոչ գույքային իրավունքներ, կրել պարտավորություններ, լինել հայցվոր և պատասխանող դատարանում և միջնորդ դատարանում:
- 24. Վարկային կազմակերպությունն իրավունք ունի հաշիվներ բացել բանկերում և պարտավոր է հաշվի բացման մասին 10 աշխատանքային օրվա ընթացքում գրավոր տեղեկացնել ՀՀ կենտրոնական բանկին:
- 25. Վարկային կազմակերպությունն ինքն է որոշում տրամադրվող վարկերի ու սեփական արժեթղթերի տոկոսադրույքները և միջնորդավճարների չափը՝ ՀՀ օրենսդրության պահանջների պահպանմամբ:
- 26. Վարկային կազմակերպությունը կարող է տրամադրել ձեռնարկատիրական և սպառողական վարկեր կամ փոխառություններ:
- 27. Վարկային կազմակերպությունն իրավունք ունի փոխառություններ ներգրավել (վերցնել), պարտատոմսեր թողարկել և տեղաբաշխել, և (կամ) նմանատիպ գործարքներ կնքել բացառապես իրավաբանական անձանց, իր մասնակիցների, Հայաստանի Հանրապետության, համայնքների և այլ պետությունների, միջազգային կազմակերպությունների հետ: Վարկային կազմակերպությունը կարող է ներգրավել փոխառություններ հրապարակային օֆերտաների միջոցով:
- 28. Վարկային կազմակերպությունն իր պարտավորությունների համար պատասխանատվություն է կրում սեփականության իրավունքով իրեն պատկանող գույքով (միջոցներով), եթե այլ բան նախատեսված չէ ՀՀ օրենսդրությամբ:
- 29. Վարկային կազմակերպությունը պատասխանատվություն չի կրում իր բաժնետերերի պարտավորությունների համար: Վարկային կազմակերպության բաժնետերերն իրենց պատկանող բաժնետոմսերի արժեքի սահմաններում կրում են վարկային կազմակերպության գործունեության հետ կապված վնասների ռիսկը:
- 210. Վարկային կազմակերպությանն արգելվում է իրականացնել արտադրական, առևտրային կամ լիցենզավորման ենթակա այլ գործունեություն:
- 211. Վարկային կազմակերպությունը կանխիկ դրամով և (կամ) այլ արժեքներով գործառնություններ գլխամասային գրասենյակի միջոցով չի իրականացնում, և իրականացնում է միայն իր մասնաճյուղերի միջոցով, բացառությամբ այն մասնաճյուղերի, որոնց կանոնադրությամբ նման գործառնությունների իրականացման հնարավորություն նախատեսված չէ:

3. ՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼԸ, ԱՅԼ  
ՀԻՄՆԱԴՐԱՄՆԵՐԸ

- 3.1. Վարկային կազմակերպության կանոնադրական կապիտալը կազմում է 3,445,000,000 (երեք միլիարդ չորս հարյուր քառասունհինգ միլիոն) ՀՀ դրամ, որը ներառում է 17,225 (տասնյոթ հազար երկու հարյուր քսանհինգ) հատ սովորական անվանական բաժնետոմսեր, յուրաքանչյուրը 200.000 (երկու հարյուր հազար) ՀՀ դրամ անվանական արժեքով:
- 3.2. Վարկային կազմակերպության հայտարարված բաժնետոմսերի քանակը կազմում է 100.000 (հարյուր հազար) հատ:
- 3.3. Վարկային կազմակերպությունը կարող է ավելացնել իր կանոնադրական կապիտալի չափը վարկային կազմակերպության բաժնետոմսերի անվանական արժեքի ավելացմամբ կամ լրացուցիչ բաժնետոմսերի տեղաբաշխմամբ, եթե նախկինում տեղաբաշխված բաժնետոմսերը լրիվ վճարված են:
- 3.4. Վարկային կազմակերպությունը կանոնադրական կապիտալի նվազեցումը կարող է կատարել՝  
ա/ բաժնետոմսերի անվանական արժեքի փոքրացմամբ,  
բ/ բաժնետոմսերի ընդհանուր քանակի պակասեցմամբ, այդ թվում «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքով նախատեսված դեպքերում, դրանց մի մասի ձեռքբերմամբ և մարմամբ:
- 3.5. Վարկային կազմակերպությունն իրավունք չունի նվազեցնել կանոնադրական կապիտալը, եթե դրա հետևանքով կանոնադրական կապիտալի չափը կփոքրանա օրենքով սահմանված նվազագույն չափից: Վարկային կազմակերպության կողմից կանոնադրական կապիտալը սահմանված նվազագույն չափից նվազեցնելը հիմք է վարկային կազմակերպության լուծարման համար:
- 3.6. Վարկային կազմակերպությունում ստեղծվում է պահուստային հիմնադրամ՝ կանոնադրական կապիտալի 15%-ի չափով:
- 3.7. Եթե պահուստային հիմնադրամը կազմում է կանոնադրությամբ սահմանված չափից ավելի փոքր մեծություն, ապա հատկացումները այդ հիմնադրամին կատարվում են շահույթից՝ դրա 5%-ի չափով:
- 3.8. Պահուստային հիմնադրամն օգտագործվում է վարկային կազմակերպության կորուստները ծածկելու, ինչպես նաև վարկային կազմակերպության պարտատոմսերը մարելու և բաժնետոմսերը հետ գնելու համար, եթե վարկային կազմակերպության շահույթը և այլ միջոցները դրա համար չեն բավարարում:
- 3.9. Վարկային կազմակերպության ընդհանուր ժողովի որոշմամբ կարող են ստեղծվել նաև այլ պահուստային հիմնադրամներ, որոնք նպատակ ունեն նպաստել վարկային կազմակերպության տնտեսական զարգացմանը և աշխատողների սոցիալ-տնտեսական պահանջմունքների բավարարմանը:
- 3.10. Այլ ֆոնդերի ձևավորման ու օգտագործման, դրանց հատկացումների կարգը և չափը որոշվում են վարկային կազմակերպության Բաժնետերերի ընդհանուր ժողովի կողմից:

4. ՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԲԱԺՆԵՏԵՐԵՐԸ

- 4.1. Վարկային կազմակերպության կանոնադրական կապիտալի ձևավորմանը կարող են մասնակցել ինչպես Հայաստանի Հանրապետության, այնպես էլ օտարերկրյա ֆիզիկական և իրավաբանական անձինք:
- 4.2. Վարկային կազմակերպության բաժնետերերը պարտավոր են՝
  - 4.2.1. սահմանված կարգով կատարել դրամական ներդրումներ,
  - 4.2.2. չիրապարակել վարկային կազմակերպության գործունեության վերաբերյալ

գաղտնիք պարունակող տեղեկություններ:

- 4.3. Վարկային կազմակերպության բաժնետերերը կարող են կրել կանոնադրությամբ նախատեսված և օրենքին ու այլ իրավական ակտերին չհակասող այլ պարտավորություններ:
- 4.4. Վարկային կազմակերպության միակ բաժնետերն է հանդիսանում «ԱՄԶՈՐ ՀԱՅԱՍՏԱՆ» բարեգործական հիմնադրամը, որը հիմնվել է Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն, գործունեության հիմնական վայրը եւ գրանցման հասցեն է ՀՀ, ք. Երևան, Արաբկիր 27-րդ փ., 12 բնակելի տուն (այսուհետ՝ Միակ բաժնետեր):
- 4.5. Վարկային կազմակերպության յուրաքանչյուր սովորական բաժնետոմս իր սեփականատեր հանդիսացող բաժնետիրոջը տալիս է միևնույն իրավունքները:
- 4.6. Սովորական բաժնետոմսի սեփականատերերն իրավունք ունեն՝
  - 4.6.1. մասնակցել կազմակերպության ընդհանուր ժողովին՝ վերջինիս իրավասությանը պատկանող բոլոր հարցերի նկատմամբ ձայնի իրավունքով,
  - 4.6.2. մասնակցել վարկային կազմակերպության կառավարմանը,
  - 4.6.3. ստանալ շահութաբաժիններ վարկային կազմակերպության գործունեությունից առաջացած շահույթից,
  - 4.6.4. վարկային կազմակերպության լուծարման դեպքում ստանալ վարկային կազմակերպության գույքի իրեն հասանելիք մասը,
  - 4.6.5. ստանալ վարկային կազմակերպության գործունեության վերաբերյալ ցանկացած տեղեկատվություն,
  - 4.6.6. ընդհանուր ժողովին մասնակցել անձամբ կամ իր ներկայացուցիչների միջոցով,
  - 4.6.7. օգտվել օրենքով և կանոնադրությամբ նախատեսված այլ իրավունքներից:
- 4.7. Արտոնյալ (հաստատագրված կամ փոփոխական շահութաբաժնով կամ այլ տեսակի) բաժնետոմսերի սեփականատեր բաժնետերերն իրավունք ունեն՝
  - 4.7.1. մասնակցել վարկային կազմակերպության կառավարմանը,
  - 4.7.2. ստանալ վարկային կազմակերպության գործունեության վերաբերյալ որոշակի տեղեկատվություն,
  - 4.7.3. վարկային կազմակերպության լուծարման դեպքում ստանալ վարկային կազմակերպության գույքի իրեն հասանելիք մասը,
  - 4.7.4. օրենքով նախատեսված դեպքերում և կարգով մասնակցել վարկային կազմակերպության ընդհանուր ժողովին՝ ձայնի իրավունքով,
  - 4.7.5. օրենքով սահմանված կարգով և չափով ստանալ շահութաբաժին՝ վարկային կազմակերպության գործունեությունից առաջացած շահույթից:
- 4.8. Բաժնետերերը բաժնետիրոջ իրավունքները ձեռք են բերում միայն բաժնետոմսերի լրիվ արժեքը վճարելուց հետո:
- 4.9. Վարկային կազմակերպությունը կարող է տեղաբաշխել սովորական և արտոնյալ (հաստատագրված կամ փոփոխական շահութաբաժնով կամ այլ տեսակի) բաժնետոմսեր՝ գործող օրենսդրության համապատասխան:
- 4.10. Բաժնետոմսերը կարող են տեղաբաշխվել ինչպես տպագրական եղանակով պատրաստված բաժնետոմսի, այնպես էլ բաժնետերերի ռեեստրում բաժնետիրոջ անձնական հաշվում գրանցման ձևով (ոչ փաստաթղթային ձևի):
- 4.11. Վարկային կազմակերպության կողմից տեղաբաշխված բաժնետոմսերը ոչ փաստաթղթային ձևի են:
- 4.12. Վարկային կազմակերպության կողմից տեղաբաշխվող արտոնյալ (հաստատագրված կամ փոփոխական շահութաբաժնով կամ այլ տեսակի) բաժնետոմսերի ընդհանուր անվանական արժեքը չի կարող գերազանցել կանոնադրական կապիտալի 25%-ը:

- 4.13. Վարկային կազմակերպության կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ձեռք բերելու համար իրավաբանական կամ ֆիզիկական անձը կամ փոխկապակցված անձինք պարտավոր են մինչև տվյալ մասնակցությունը ձեռք բերելը գործող օրենսդրության համաձայն դիմել Կենտրոնական բանկ՝ նախնական համաձայնություն ստանալու համար:
- 4.14. Վարկային կազմակերպության բաժնետոմսերի օտարումը երրորդ անձին կարող է կատարվել միայն օրենսդրությամբ սահմանված կարգով:
- 4.15. Վարկային կազմակերպության բաժնետերերն ունեն վարկային կազմակերպության այլ բաժնետերերի կողմից վաճառվող բաժնետոմսերը ձեռք բերելու նախապատվության իրավունք: Նախապատվության իրավունքի իրականացման ժամկետը սահմանվում է բաժնետոմսերի վաճառքի առաջարկման պահից 30 օր:

## 5. ՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՇԱՀՈՒՅԹԻ ԲԱՇԽՈՒՄԸ

- 5.1. Վարկային կազմակերպությունն իրավունք ունի որոշում ընդունել (հայտարարել) տեղաբաշխված բաժնետոմսերի դիմաց եռամսյակային, կիսամյակային և տարեկան շահութաբաժինների վճարման մասին:
- 5.2. Շահութաբաժինները վճարվում են վարկային կազմակերպության զուտ շահույթից:
- 5.3. Տարեկան շահութաբաժինների վճարման և շահութաբաժնի չափի, ինչպես նաև շահութաբաժինների վճարման ժամկետի մասին որոշումը խորհրդի առաջարկությամբ ընդունվում է վարկային կազմակերպության բաժնետերերի ընդհանուր ժողովի կողմից: Միջանկյալ (եռամսյակային և կիսամյակային) շահութաբաժինների վճարման և շահութաբաժնի չափի, ինչպես նաև շահութաբաժինների վճարման ժամկետի մասին որոշումն ընդունվում է խորհրդի կողմից:
- 5.4. Վարկային կազմակերպության բաժնետերերին շահութաբաժիններ վճարելն արգելվում է, եթե լրիվ չի վճարվել վարկային կազմակերպության կանոնադրական կապիտալը, ինչպես նաև օրենսդրությամբ նախատեսված այլ դեպքերում:

## 6. ՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ

- 6.1. Բաժնետերերի ընդհանուր ժողովը՝
- 6.1.1. վարկային կազմակերպության բաժնետերերի ընդհանուր ժողովը (այսուհետ նաև՝ ժողով կամ ընդհանուր ժողով) վարկային կազմակերպության կառավարման բարձրագույն մարմինն է: Ընդհանուր ժողովը գումարվում է և անցկացնում ժողովները սույն կանոնադրությանը և օրենսդրությանը համաձայն:

### ա/ Տարեկան ընդհանուր ժողով

- վարկային կազմակերպությունը պարտավոր է ամեն տարի գումարել բաժնետերերի տարեկան ընդհանուր ժողով (այսուհետ՝ ՏԸԺ):
- վարկային կազմակերպության բաժնետերերի ՏԸԺ-ը գումարվում է վարկային կազմակերպության հերթական ֆինանսական տարվա ավարտից հետո վեց ամսվա ընթացքում:
- տարեկան ընդհանուր ժողովը գումարվում է վարկային կազմակերպության տնօրենների խորհրդի (այսուհետ՝ խորհուրդ) կողմից:

### բ/ Արտահերթ ժողովներ

Բաժնետերերի ՏԸԺ-ից բացի՝ վարկային կազմակերպության բաժնետերերի ընդհանուր ժողովները համարվում են արտահերթ: Վարկային կազմակերպության արտահերթ ժողովները գումարվում են անհետաձգելի

հարցերի քննարկման համար:

գ/ Բաժնետերերի ցուցակ

Ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակը կազմվում է խորհրդի կողմից՝ համաձայն Բաժնետերերի ռեեստրում նշված տվյալների:

դ/ Ժողովի մասին ծանուցում

Ժողովի մասին ծանուցում ուղարկվում է մասնակցության իրավունք ունեցող բոլոր բաժնետերերին ժողովի նշանակված օրվանից առնվազն 7 օր առաջ: Ծանուցումը պետք է ներառի տեղեկատվություն ժողովի օրվա, վայրի, առաջարկվող օրակարգի մասին և ուղարկվի փոստի, էլեկտրոնային փոստի կամ ֆաքսի միջոցով:

ե/ Օրակարգ

Ընդհանուր ժողովը չի կարող որոշումներ կայացնել օրակարգում չներառված հարցերի վերաբերյալ: Օրակարգում ներառվող թեմաները և նյութերը սահմանված են օրենսդրությամբ:

զ/ Քվորում

Քվորումը համարվում է ապահովված, եթե ժողովին մասնակցում են վարկային կազմակերպության ընդհանուր ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերն (կամ նրանց ներկայացուցիչները), ովքեր տիրապետում են ձայնի իրավունք տվող տեղաբաշխված բաժնետոմսերի 50 տոկոսից ավելին: Միակ բաժնետիրոջ դեպքում, ով ներկայացնում է քվեարկելու իրավունք ունեցող 100 տոկոս բաժնետոմսերը, միակ բաժնետիրոջ որոշումները կայացվում են վերջինիս ներկայացուցչի (ներկայացուցիչների) կողմից: Միակ բաժնետիրոջ ներկայացուցիչ(ներ)ը պետք է մասնակցի ժողովին քվորում ապահովելու համար:

է/ Քվեարկություն

Եթե վարկային կազմակերպությունն ունի մեկից ավելի քվեարկելու իրավունք ունեցող բաժնետեր, ընդհանուր ժողովում քվեարկությունն իրականացվում է «մեկ քվեարկող մասնակից, մեկ ձայն» սկզբունքով՝ բացառությամբ խոհրդի անդամների ընտրության և օրենքով սահմանված այլ դեպքերի, երբ կիրառվում է ձայների մեծամասնությամբ որոշումներ կայացնելու սկզբունքը: Ընդհանուր ժողովի որոշումները կայացվում են քվեարկելու իրավունք ունեցող բաժնետերերի ձայների պարզ մեծամասնությամբ՝ բացառությամբ օրենսդրությամբ և սույն կանոնադրությամբ սահմանված դեպքերի: Միակ բաժնետիրոջ դեպքում բաժնետիրոջ կողմից որոշումները կայացնում է վերջինիս ներկայացուցիչ(ներ)ը:

6.1.2. Վարկային կազմակերպության բաժնետերերի ընդհանուր ժողովի իրավասությանը վերաբերող հարցերի կապակցությամբ որոշումներն ընդունում է վարկային կազմակերպության միակ բաժնետերը:

Բաժնետերերի ընդհանուր ժողովի իրավասությանն են պատկանում՝

- ա) վարկային կազմակերպության կանոնադրության հաստատումը, դրա մեջ փոփոխությունների և լրացումների կատարումը, վարկային կազմակերպության կանոնադրության հաստատումը նոր խմբագրությամբ,
- բ) վարկային կազմակերպության վերակազմակերպումը, սակայն միայն խորհրդի առաջարկությամբ,
- գ) վարկային կազմակերպության լուծարումը,
- դ) լուծարային հանձնաժողովի նշանակումը, միջանկյալ և ամփոփիչ լուծարային

հաշվեկշռի հաստատումը,

- ե) վարկային կազմակերպության խորհրդի քանակական կազմի հաստատումը, դրա անդամների ընտրությունը և նրանց լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը,
  - զ) հայտարարված բաժնետոմսերի ծավալի առավելագույն չափի սահմանումը,
  - է) վարկային կազմակերպության տարեկան հաշվետվությունների, հաշվապահական հաշվեկշիռների, շահույթի և վնասի հաշվետվությունների հաստատումը, տարեկան շահութաբաժինների վճարման մասին որոշման ընդունումը և տարեկան շահութաբաժինների չափի հաստատումը,
  - ը) ընդհանուր ժողովի վարման ընթացակարգերի սահմանումը և հաշվիչ հանձնաժողովի ձևավորումը,
  - թ) վարկային կազմակերպության կողմից բաժնետերերին տեղեկատվության և նյութերի հաղորդման ձևի որոշումը, ներառյալ զանգվածային լրատվության համապատասխան միջոցի ընտրությունը, եթե հաղորդումը պետք է իրականացվի հրապարակային հայտարարության ձևով, սակայն միայն խորհրդի առաջարկությամբ,
  - ժ) օրենքով սահմանված դեպքերում՝ վարկային կազմակերպության գույքի օտարման և ձեռքբերման հետ կապված խոշոր գործարքների կնքումը (եթե գործարքի արժեքը գերազանցում է ընկերության ակտիվների հաշվեկշռային արժեքի 50%-ը),
  - ժա) օրենքով նախատեսված դեպքերում վարկային կազմակերպության կողմից տեղաբաշխված բաժնետոմսերի ձեռքբերումը և հետզնումը,
  - ժբ) վարկային կազմակերպության խորհրդի անդամների համար փոխհատուցման և պարզևավճարների սահմանումը,
  - ժգ) դուստր կամ կախյալ ընկերությունների ստեղծումը, դուստր և կախյալ ընկերություններին մասնակցությունը,
  - ժդ) օրենքով նախատեսված դեպքերում որոշման ընդունումը այնպիսի գործարքների կնքման մասին, որոնցում ներգրավված են շահագրգիռ կողմեր,
  - ժե) բաժնետոմսերի անվանական արժեքի փոքրացման միջոցով, բաժնետոմսերի ընդհանուր քանակի կրճատման նպատակով վարկային կազմակերպության կողմից տեղաբաշխված բաժնետոմսերի ձեռքբերման, ինչպես նաև վարկային կազմակերպության կողմից ձեռքբերված կամ հետզնված բաժնետոմսերի մարման ճանապարհով կանոնադրական կապիտալի չափի նվազեցումը,
  - ժզ) վարկային կազմակերպության վերստուգիչ հանձնաժողովի անդամների (վերստուգողի) ընտրությունը 3 (երեք) տարի ժամկետով և նրանց լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը,
  - ժէ) վարկային կազմակերպության արտաքին աուդիտն իրականացնող անձի կամ կազմակերպության հաստատումը,
  - ժը) սույն կանոնադրությամբ և օրենքով նախատեսված կամ վերապահված այլ որոշումների ընդունումը կամ այլ լիազորությունների ու պարտականությունների իրականացումը:
- 6.1.3. Սույն կանոնադրության 6.1.2. կետում նշված իրավասությունները հանդիսանում են ընդհանուր ժողովի բացառիկ իրավասությունները և չեն կարող փոխանցվել վարկային կազմակերպության խորհրդին կամ գործադիր վարչությանը՝ բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:
- 6.1.4. Վարկային կազմակերպության միակ բաժնետերը կայացնում է ցանկացած որոշում միայն ընդհանուր ժողովի ընթացքում, որոնք գումարվում են 6.1 հոդվածի համաձայն:
- 6.2. Վարկային կազմակերպության խորհուրդը՝
- 6.2.1. Վարկային կազմակերպության խորհուրդն իրականացնում է վարկային կազմակերպության գործունեության ընդհանուր ղեկավարումը՝ բացառությամբ այն հարցերի, որոնք սույն կանոնադրությամբ և օրենքով վերապահված են ժողովի բացառիկ իրավասությանը:



- 6.2.2. Վարկային կազմակերպության խորհրդի անդամների թիվը սահմանվում է տարեկան ընդհանուր ժողովի կողմից. այնուամենայնիվ, խորհրդի ձայնի իրավունք ունեցող անդամների թիվը չպետք է պակաս լինի 3-ից (երեք) և ավել 15-ից (տասնհինգ): Խորհրդի անդամներն ընտրվում են վարկային կազմակերպության միակ բաժնետիրոջ կողմից ՏԸԺ ընթացքում: Խորհրդի անդամների լիազորությունները վաղաժամկետ դադարում են ընդհանուր ժողովի կողմից արտահերթ ժողովի ընթացքում՝ օրենքով և սույն Կանոնադրությամբ սահմանված կարգով: Գործադիր վարչությունը խորհրդակցական ձայնի իրավունքով՝ առանց քվեարկելու իրավունքի, մասնակցում է խորհրդի բոլոր նիստերին՝ բացառությամբ այն դեպքերի, երբ խորհուրդը որոշում է դռնփակ նիստեր հրավիրել, որոնց վերաբերյալ յուրաքանչյուր դեպքում խորհուրդը կայացնում է որոշում գործադիր վարչության բացակայությամբ դռնփակ նիստ գումարելու մասին:
- 6.2.3. Խորհրդի անդամներն ընտրվում կամ վերընտրվում են 3 (երեք) տարի ժամկետով մինչև նրանց իրավահաջորդների ընտրությունը և որակավորումը, կամ մինչև նրանց վաղաժամկետ հրաժարական ներկայացնելը կամ հեռացումը:
- 6.2.4. Վարկային կազմակերպության այն բաժնետերերը, որոնք ընդհանուր ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակը կազմելու ամսաթվի դրությամբ տիրապետում են վարկային կազմակերպության ձայնի իրավունք տվող տեղաբաշխված բաժնետոմսերի 10 և ավելի տոկոսին, իրավունք ունեն առանց ընտրության ընդգրկվել վարկային կազմակերպության խորհրդի կազմում կամ վարկային կազմակերպության խորհրդի կազմում նշանակել իրենց ներկայացուցչին:
- 6.2.5. Խորհրդի անդամները կարող են ստանալ փոխհատուցում ընդհանուր ժողովի կողմից սահմանված կարգով:
- 6.2.6. Խորհուրդն ունի նախագահ և խորհրդի կողմից հաստատված խորհրդի այլ պաշտոնյաներ: Խորհրդի նախագահը հանդիսանում է խորհրդի անդամ և ընտրվում է խորհրդի քվեարկելու իրավունք ունեցող բոլոր անդամների ձայների մեծամասնությամբ: Խորհուրդը կարող է ցանկացած ժամանակ վերընտրել նախագահին կամ ընտրել նոր նախագահ խորհրդի քվեարկելու իրավունք ունեցող բոլոր անդամների ձայների մեծամասնությամբ:
- 6.2.7. Խորհրդի նախագահը՝
- ա) համակարգում է խորհրդի աշխատանքները,
  - բ) հրավիրում և նախագահում է խորհրդի նիստերը,
  - գ) իրականացնում է օրենսդրությամբ սահմանված նմանատիպ այլ գործառույթներ:
- 6.2.8. Խորհուրդն ունի առնվազն 2 (երկու ) հետևյալ հանձնաժողովները և, ըստ անհրաժեշտության, խորհուրդը կարող է նմանատիպ այլ հանձնաժողովներ և աշխատանքային խմբեր ստեղծել՝
- ա) Անձնակազմի,
  - բ) Աուդիտի/ռիսկերի կառավարման:
- 6.2.9. Խորհրդի բոլոր նիստերին քվորում ապահովելու համար կարող է բացակա լինել Խորհրդի միայն մեկ անդամ: Այդ մեկ անդամը չի կարող լինել Խորհրդի նախագահը:
- 6.2.10. Խորհրդի որոշումներն ընդունվում են նիստին ներկա խորհրդի քվեարկելու իրավունք ունեցող անդամների ձայների մեծամասնությամբ, եթե օրենսդրությամբ կամ սույն կանոնադրությամբ այլ բան նախատեսված չէ: Քվեարկության ժամանակ խորհրդի յուրաքանչյուր անդամ ունի միայն մեկ ձայն: Քվեարկության իրավունքի փոխանցումը խորհրդի մեկ անդամից մյուսին կամ խորհրդի մեկ անդամից երրորդ կողմին, ով չի հանդիսանում խորհրդի անդամ (վստահված քվեարկություն), չի թույլատրվում:

6.2.11. Վարկային կազմակերպության խորհրդի նիստերը հրավիրում է խորհրդի նախագահը՝ ըստ անհրաժեշտության, բայց ոչ պակաս քան տարեկան չորս անգամ: Խորհրդի նիստերը կարող են հրավիրվել ա) խորհրդի անդամի, բ) միակ բաժնետիրոջ, գ) արտաքին ատոլիտի, դ) վերստուգիչ հանձնաժողովի (վերստուգողի) կամ ե) գործադիր վարչության կողմից: Խորհուրդը կարող է որոշումներ ընդունել անձամբ կամ հեռակա քվեարկությամբ (հեռախոսակապ, տեսակոնֆերանս կամ էլեկտրոնային հաղորդակցության այլ մեթոդով):

6.2.12. Վարկային կազմակերպության խորհուրդն իրավասու է՝

- ա) որոշել վարկային կազմակերպության գործունեության հիմնական ուղղությունները,
- բ) օրենքով սահմանված կարգով որոշել վարկային կազմակերպության գույքի շուկայական արժեքը,
- գ) ընդհանուր ժողովի նիստերի համար նախապատրաստել առաջարկություններ վարկային կազմակերպության վերստուգող հանձնաժողովի (վերստուգողի) վարձատրության և ծախսերի փոխհատուցումների վճարման կարգի և պայմանների վերաբերյալ,
- դ) սահմանել վարկային կազմակերպության ատոլիտ անցկացնող անձի/կազմակերպության վարձատրության չափը,
- ե) ընդհանուր ժողովի համար նախապատրաստել առաջարկություններ վարկային կազմակերպության բաժնետոմսերի դիմաց վճարվող տարեկան շահութաբաժինների չափի և վճարման կարգի վերաբերյալ,
- զ) սահմանել վարկային կազմակերպության բաժնետոմսերի դիմաց վճարվող միջանկյալ (եռամսյակային կամ կիսամյակային) շահութաբաժինների չափը և վճարման կարգը,
- է) որոշում կայացնել վարկային կազմակերպության պահուստային և այլ հիմնադրամների օգտագործման վերաբերյալ,
- ը) հաստատել վարկային կազմակերպության և դրա կառավարման մարմինների գործունեությունը կանոնակարգող ներքին փաստաթղթեր,
- թ) կնքել վարկային կազմակերպության գույքի օտարման և ձեռքբերման հետ կապված խոշոր գործարքներ (եթե դրանց արժեքը գերազանցում է 550,000,000 (հինգ հարյուր հիսուն միլիոն) ՀՀԴ և փոքր կամ հավասար է վարկային կազմակերպության ակտիվների արժեքի 50%-ին)՝ օրենքով նախատեսված դեպքերում,
- ժ) հաստատել վարկային կազմակերպության վարչակազմակերպական կառուցվածքը,
- ժա) հաստատել վարկային կազմակերպության հաստիքացուցակը,
- ժբ) մեծացնել վարկային կազմակերպության կանոնադրական կապիտալի չափը՝ ավելացնելով բաժնետոմսերի անվանական արժեքը կամ տեղաբաշխելով լրացուցիչ բաժնետոմսեր,
- ժգ) գումարել տարեկան և արտահերթ ընդհանուր ժողովները՝ բացառությամբ «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ Օրենքի 74-րդ հոդվածի 6-րդ կետում նշված դեպքերի,
- ժդ) հաստատել ժողովի օրակարգը,
- ժե) հաստատել ժողովին մասնակցող բաժնետերերի ցանկը,
- ժզ) լուծել բոլոր խնդիրները, որոնք կապված են «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ Օրենքով սահմանված խորհրդի իրավասությունների շրջանակներում խորհրդի նիստերի նախապատրաստման և իրականացման հետ,
- ժէ) ներկայացնել ընդհանուր ժողովին սույն կանոնադրության 6.1.2 բ) և 6.1.2թ.) կետերում նշված հարցերը,

- ժր) նշանակել գործադիր տնօրենին և ֆինանսական տնօրեն/գլխավոր հաշվապահին, ձևավորել գործադիր վարչություն, ընդունել աշխատանքի խորհրդի կողմից սահմանված վարկային կազմակերպության ավագ աշխատակազմին և վաղակետ դադարեցնել նշված աշխատակիցների իրավասությունները,
- ի) սույն կանոնադրության 6.2.8 կետի համաձայն ստեղծել խորհրդի հանձնաժողովներ,
- իա) հաստատել տարեկան բյուջեն,
- իբ) վավերացնել հրապարակման համար վարկային կազմակերպության ֆինանսական հաշվետվությունները և ներկայացնել ընդհանուր ժողովին,
- իգ) ընդունել սույն կանոնադրությամբ և օրենսդրությամբ նախատեսված վարկային կազմակերպության ֆինանսական գործառույթների իրականացումը կանոնակարգող ներքին իրավական ակտերը,
- իդ) հաստատել վարկային կազմակերպության տարածքային և առանձնացված կառուցվածքային ստորաբաժանումների կանոնադրությունները և բաժանել գործառնական պատասխանատվությունը վարկային կազմակերպության առանձնացված կառուցվածքային ստորաբաժանումների միջև,
- իե) ստեղծել վարկային կազմակերպության մասնաճյուղեր, ներկայացուցչություններ և հիմնարկներ,
- իզ) իրականացնել սույն կանոնադրությամբ և օրենսդրությամբ սահմանված կամ վերապահված այլ իրավասություններ և պարտականություններ,

6.3. Վարկային կազմակերպության գործադիր մարմինը՝ գործադիր վարչություն, գործադիր տնօրեն:

6.3.1. Վարկային կազմակերպության ընթացիկ գործունեության ղեկավարումն իրականացնում է գործադիր տնօրենը՝ համակարգելով գործադիր վարչության հետ:

6.3.2. Գործադիր վարչության և գործադիր տնօրենի իրավասությանն են պատկանում վարկային կազմակերպության ընթացիկ գործունեության կառավարման բոլոր հարցերը՝ բացառությամբ օրենքով և սույն կանոնադրությամբ ընդհանուր ժողովի, խորհրդի իրավասությանը վերապահված հարցերի կամ եթե այլ բան նախատեսված չէ:

6.3.3. Գործադիր վարչություն.

- ա) գործադիր վարչությունը վարկային կազմակերպության միակ գործադիր մարմինն է,
- բ) գործադիր վարչությունը հաշվետու է խորհրդին և ընդհանուր ժողովին,
- գ) գործադիր վարչությունը ներառում է գործադիր տնօրենին և ֆինանսական տնօրեն/գլխավոր հաշվապահին,
- դ) խորհրդի անդամները չեն կարող միաժամանակ լինել գործադիր վարչության անդամ: Այնուամենայնիվ, խորհրդի անդամները կարող են մասնակցել գործադիր վարչության նիստերին խորհրդակցական ձայնի իրավունքով՝ առանց քվեարկության իրավունքի,
- ե) վարկային կազմակերպության գործադիր տնօրենն ի պաշտոնե հանդես է գալիս նաև որպես գործադիր վարչության նախագահ,
- զ) խորհրդի նախագահը կամ նրա լիազորված անձը վարկային կազմակերպության անունից կնքում է գրավոր պայմանագիր գործադիր տնօրենի և գործադիր վարչության յուրաքանչյուր անդամի հետ,
- է) գործադիր վարչությունը առաջնորդվում է սույն կանոնադրության համաձայն հաստատված ներքին ընթացակարգով:

- ը) գործադիր վարչությունն ապահովում է ընդհանուր առմամբ բանկային ոլորտին և, մասնավորապես, վարկային կազմակերպություններին վերաբերող բոլոր օրենքների և կանոնակարգերի, ինչպես նաև Կենտրոնական բանկի կողմից ընդունված որոշումների կամ կանոնակարգերի կիրարկումն ու իրականացումը:
- թ) գործադիր վարչությունն իրավասու է՝
- թ-1) տնօրինել վարկային կազմակերպության գույքը, այդ թվում՝ ֆինանսական միջոցները, գործարքներ կնքել վարկային կազմակերպության անունից, ներառյալ փոխառությունների, գրավի պայմանագրերի կնքումը և վարկեր (փոխառություններ) տրամադրելու և ներգրավելու հետ կապված այլ գործարքները, որոնց արժեքը գործարքի ստորագրման պահին, չի գերազանցում 550,000,000 (հինգ հարյուր հիսուն միլիոն) ՀՀԴ, ինչպես նաև նշված գործարքների իրականացման համար ընկերության անունով բացել բանկային հաշիվներ և տալ հանձնարարականներ այդ հաշիվների կառավարման համար (վճարման հանձնարարականներ): Վերոնշյալ գումարը գերազանցող գործարքների իրականացման լիազորությունները կարող են տրվել միայն խորհրդի կամ ընդհանուր ժողովի որոշման հիման վրա՝ համաձայն սույն կանոնադրության,
- թ-2) տրամադրել լիազորագրեր վարկային կազմակերպության անունից գործարքների կնքման համար, այդ թվում՝ փոխառությունների տրամադրման, փոխառությունների ներգրավման, գրավի պայմանագրերի կնքման և այլ գործարքներ իրականացնելու համար, որոնք առնչվում են փոխառությունների տրամադրմանը, վարկերի (փոխառությունների) ներգրավմանը, ներառյալ բանկային գործարքները, որոնց արժեքը գործարքի ստորագրման պահին չի գերազանցում 100,000,000 (մեկ հարյուր միլիոն) ՀՀԴ,
- թ-3) խորհրդի հաստատմանը ներկայացնել վարկային կազմակերպության առանձնացված ստորաբաժանումների կանոնակարգերը, վարկային կազմակերպության վարչակազմակերպչական կառուցվածքը, հաստիքացուցակը,
- թ-4) սահմանված կարգով հաստատել վարկային կազմակերպությունն աշխատակիցներին աշխատանքի ընդունումը և ազատումը (բացառությամբ՝ խորհրդի կողմից սահմանված գործադիր վարչության և ավագ աշխատակազմի, ովքեր ընդունվում են աշխատանքի և ազատվում են խորհրդի որոշումների համաձայն) և աշխատակիցների հետ կնքել աշխատանքային պայմանագրեր՝ համաձայն սույն հոդվածի դրույթների:
- թ-5) կնքել աշխատանքային պայմանագրեր խորհրդի կողմից ընտրված վարկային կազմակերպության ավագ աշխատակազմի հետ՝ համաձայն սույն կանոնադրության 6.2.12 ժը) հոդվածի:
- թ-6) վարկային կազմակերպության աշխատակիցների նկատմամբ կիրառել խրախուսման և կարգապահական պատասխանատվության միջոցներ,
- թ-7) 6.3.3 կետի թ) թ-1) ենթակետով նախատեսված գումարը գերազանցող արժեքով գործարքները կարող են իրականացվել խորհրդի (վարկային կազմակերպության ակտիվների արժեքի մինչև 50%) կամ ընդհանուր ժողովի (վարկային կազմակերպության ակտիվների արժեքի 50%-ից ավելի) նախնական գրավոր համաձայնության առկայության դեպքում,
- թ-8) բանկերում բացել վարկային կազմակերպության համար բանկային հաշիվներ,
- թ-9) իրականացնել սույն կանոնադրությամբ իրեն վերապահված այլ լիազորություններ:
- ժ) Սույն կանոնադրության 6.3.3 թ) կետով նախատեսված հարցերով ընդունված որոշումները պետք է ստորագրվեն գործադիր վարչության ձայնի իրավունք ունեցող բոլոր անդամների կողմից և հաստատվեն վարկային կազմակերպության կնիքով: Վերոնշյալ որոշումների հիման վրա պայմանագրերը և/կամ գործարքները իրականացվում են գործադիր տնօրենի

կողմից, իսկ գործադիր տնօրենի բացակայության դեպքում ֆինանսական տնօրեն/գլխավոր հաշվապահի կողմից:

#### 6.3.4. Գործադիր տնօրենը.

ա) գործադիր տնօրենն իրավասու է՝

(ա-1) ներկայացնել վարկային կազմակերպությունը Հայաստանի Հանրապետությունում և Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում,

(ա-2) գործել առանց լիազորագրի,

(ա-3) իրավիրել և նախագահել գործադիր վարչության նիստերը, վարկային կազմակերպության ֆինանսական տնօրեն/գլխավոր հաշվապահի հետ միասին ստորագրել գործադիր վարչության որոշումները և նիստերի արձանագրությունները,

(ա-4) իր իրավասության սահմաններում արձակել հրամաններ, հրահանգներ, կատարման համար պարտադիր ցուցումներ և վերահսկել դրանց կատարումը,

#### 6.4. Վարկային կազմակերպության ղեկավարները՝

6.4.1 Վարկային կազմակերպության ղեկավար են հանդիսանում վարկային կազմակերպության խորհրդի նախագահը և խորհրդի անդամները, գործադիր վարչության անդամները և վերստուգիչ հանձնաժողովը (վերստուգողը):

6.4.2 Վարկային կազմակերպության ֆինանսական տնօրեն/գլխավոր հաշվապահը և կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարները իրենց գործունեության ընթացքում ղեկավարվում են գործող օրենսդրությամբ, ՀՀ կենտրոնական բանկի որոշումներով և սույն կանոնադրությամբ:

### 7. ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՈՒՄԸ ԵՎ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

7.1. Վարկային կազմակերպությունը Կենտրոնական բանկի սահմանած կարգով և ժամկետներում կազմում, հրապարակում և ՀՀ կենտրոնական բանկ է ներկայացնում Հայաստանի Հանրապետության օրենքներով և այլ իրավական ակտերով սահմանված ֆինանսական հաշվետվությունները, ինչպես նաև Կենտրոնական բանկի սահմանած այլ հաշվետվություններ:

7.2. Վարկային կազմակերպությունը կազմում և ներկայացնում է հրապարակվող ֆինանսական հաշվետվությունները՝ համաձայն «Հաշվապահական հաշվառման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի:

7.3. Շահութահարկի և նորմատիվային ստանդարտների հաշվարկները, վարկային կազմակերպության ներդրումային արժեթղթերում ներդրումների հնարավոր կորուստների պահուստի ձևավորումը և օգտագործումը, վարկերի ու դեբիտորական պարտքերի դասակարգումը և հնարավոր կորուստների պահուստների ձևավորումն իրականացվում է «Բանկերի և բանկային գործունեության մասին» և «Շահութահարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքներին համապատասխան սահմանված կարգերով:

### 8. ՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՎԵՐՍՏՈՒԳԻՉ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ (ՎԵՐՍՏՈՒԳՈՂԸ)

8.1. Վարկային կազմակերպության ֆինանսատնտեսական գործունեության վերահսկման իրավասությունները տրված են վերստուգիչ հանձնաժողովին (վերստուգողին): Վերստուգիչ հանձնաժողովի անդամներն (վերստուգողն) ընտրվում են ընդհանուր ժողովի կողմից՝ երեք տարի ժամկետով: Վարկային կազմակերպության

խորհրդի անդամները և կառավարման մարմիններում ընդգրկված անձինք չեն կարող միաժամանակ լինել վերստուգիչ հանձնաժողովի անդամներ (վերստուգող):

82. Վերստուգիչ հանձնաժողովը (վերստուգողը)`

- ա) վարկային կազմակերպությունում հսկողություն է սահմանում հաշվապահական հաշվառման, ֆինանսական հաշվետվությունների նախապատրաստման նկատմամբ և իրականացնում է վարկային կազմակերպության ֆինանսական գործունեության տարեկան արդյունքների ստուգում,
- բ) ընդհանուր ժողովին և խորհրդին հաշվետվություն է ներկայացնում օրենքներին և այլ իրավական ակտերին վարկային կազմակերպության գործունեության համապատասխանության, ինչպես նաև Կենտրոնական բանկի հանձնարարականները սահմանված ժամկետում կատարելու մասին,
- գ) եզրակացություններ է տալիս վարկային կազմակերպության ընդհանուր ժողովի և խորհրդի ներկայացրած, ինչպես նաև սեփական նախաձեռնությամբ առաջադրված հարցերի վերաբերյալ,
- դ) իրականացնում է ընդհանուր ժողովի կողմից, ինչպես նաև օրենսդրությամբ իրեն վերապահված այլ լիազորություններ:

83. Վերստուգիչ հանձնաժողովը (վերստուգողը) վարկային կազմակերպության գործունեության տարեկան հաշվետվությունների և հաշվեկշռի ստուգման վերաբերյալ կազմում է եզրակացություն և ներկայացնում վարկային կազմակերպության բաժնետերերի տարեկան ընդհանուր ժողովին: Վարկային կազմակերպության տարեկան հաշվեկշռի հաստատման ժամանակ վերստուգիչ հանձնաժողովի (վերստուգողի) եզրակացությունը պարտադիր է:

84. Վարկային կազմակերպության ֆինանսատնտեսական գործունեության վերստուգումն ու ստուգումը կատարվում է ինչպես համաձայն վերստուգիչ հանձնաժողովի (վերստուգողի) հաստատած պլանի, այնպես էլ ընդհանուր ժողովի, խորհրդի, կամ վարկային կազմակերպության քվեարկող բաժնետոմսերի առնվազն 10 տոկոսը տիրապետող բաժնետերերի պահանջով:

85. Վերստուգման արդյունքներից ելնելով` վերստուգիչ հանձնաժողովն (վերստուգողն) իրավունք ունի պահանջել վարկային կազմակերպության բաժնետերերի արտահերթ ընդհանուր ժողովի, վարկային կազմակերպության խորհրդի կամ գործադիր վարչության նիստի հրավիրում:

**9. ՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԱՌԻԴԻՏԸ**

- 9.1. Յուրաքանչյուր տարի վարկային կազմակերպության գործունեությունը ստուգվում է աուդիտորական գործունեություն իրականացնելու իրավունք ունեցող անկախ աուդիտորական կազմակերպության կողմից:
- 9.2. Անկախ աուդիտորական կազմակերպության եզրակացությունը վարկային կազմակերպությունը Կենտրոնական բանկ է ներկայացնում ֆինանսական տարվա ավարտից հետո` վեցամսյա ժամկետում:

**10. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԱՌԻԴԻՏՈՐԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄԸ**

- 10.1. Վարկային կազմակերպությունը պարտավոր է ֆինանսական տարվա ավարտից հետո` վեցամսյա ժամկետում, մամուլում հրապարակել իր տարեկան ֆինանսական հաշվետվությունները և աուդիտորական եզրակացությունները:
- 10.2. Վարկային կազմակերպությունը պարտավոր է մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 15-ը հրապարակել իր եռամսյակային ֆինանսական հաշվետվությունները:

- 10.3. Վարկային կազմակերպությունը պարտավոր է պարբերաբար հրապարակել իր գործունեության վերաբերյալ տեղեկություններ՝ Կենտրոնական բանկի սահմանված կարգով և հաճախականությամբ:

## 11. ՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԴԱԴԱՐԵՑՈՒՄԸ

- 11.1 Վարկային կազմակերպության գործունեությունը դադարեցվում է օրենսդրությամբ սահմանված կարգով: Վարկային կազմակերպության գործունեությունը դադարում է վերակազմակերպման (միաձուլման, բաժանման) և լուծարման միջոցով:
- 11.2 Վարկային կազմակերպության վերակազմակերպումը կատարվում է վարկային կազմակերպության բաժնետերերի ընդհանուր ժողովի, ինչպես նաև դատարանի որոշմամբ, ՀՀ օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված դեպքերում՝ ՀՀ կենտրոնական բանկի համաձայնությամբ:
- 11.3 Վարկային կազմակերպության լուծարման մասին որոշում ընդունելու պահից ստեղծվում է լուծարային հանձնաժողով, որը նշանակվում է վարկային կազմակերպության բաժնետերերի ընդհանուր ժողովի կողմից:
- 11.4 Վարկային կազմակերպությունը համարվում է լուծարված՝ լուծարային հանձնաժողովի կողմից իր գործունեության արդյունքների վերաբերյալ ՀՀ կենտրոնական բանկ ներկայացված հաշվետվությունը (լուծարման հաշվեկշիռը) վերջինիս կողմից հաստատվելուց հետո: Վարկային կազմակերպության լուծարման մասին ՀՀ կենտրոնական բանկում վարվող գրանցման մատյանում և ձեռնարկությունների պետական ռեգիստրում կատարվում է համապատասխան գրառում:
- 11.5 Լուծարային հանձնաժողովը վարկային կազմակերպության լուծարման վերաբերյալ տեղեկանք է հրապարակում: